Տնային խնամքի ծառայության անվանումը՝. [Insert Home Service Name]

Commission-**ի նույնացուցիչ** (Commission ID): **Որակի ապահովման գործակալության նույնացուցիչ.** [Insert Commission ID]

[Insert Date]

Հարգելի սպառող և/կամ Սպառողի ներկայացուցիչ

Դուք ստացել եք այս նամակը, քանի որ Aged Care Quality and Safety Commission-ը (Commission) պլանավորում է այցելել տարեցների խնամքի ծառայություններ ձեզ տրամադրող մատակարարին: Այցի նպատակն է գնահատել, թե արդյոք ձեզ մատուցվող խնամքի և ծառայությունների որակը համապատասխանում է Տարեցների խնամքի որակի ապահովման չափորոշիչներին (Aged Care Quality Standards):

Commission-ը My Aged Care-ից տարբերվող հաստատություն է: Commission-ը ***չի որոշում ձեր խնամքի մակարդակը, ֆինանսավորումը կամ պետական նպաստները***, և այս նամակին ի պատասխան ձեր գործողությունները ոչ մի կերպ չեն անդրադառնա դրանցից և ոչ մեկի վրա:

Commission-ը հետաքրքրված է լսելու ձեզ (կամ ձեր ներկայացուցչին), եթե դուք ցանկություն ունենաք արտահայտելու ձեր կարծիքը տարեցների խնամքի ծառայությունների ձեր մատակարարի կողմից տրամադրվող խնամքի և ծառայությունների որակի վերաբերյալ:

Այս գործընթացը լիովին կամընտրական է, և դուք ազատ եք ընտրելու ստորև նշված տարբերակներից ցանկացածը.

1) Զանգահարել Commission-ին 1800 951 822 հեռախոսահամարով և սեղմել 2 ՝ ձեր կարծիքը հեռախոսով տրամադրելու համար; կամ

2) Կապվել տարեցների խնամքի ծառայությունների ձեր մատակարարի հետ և խնդրել հանդիպում (անձամբ կամ հեռախոսով) որակի ապահովման

Engage
Empower
Safeguard

գնահատողի հետ, երբ գնահտողները այցելեն ձեր մատակարարին: Այդ այցը կայանալու է՝ [Insert Visit Date] ; կամ

3) Լրացնել Commission-ի սպառողների փորձառության առցանց հարցախույզը՝ lonergan.team/homeservice հասցեով: Հարցախույզին մուտք ստանալու համար ձեզ անհրաժեշտ կլինի այս նամակի վերին մասում նշված Commission-ի նույնացուցիչը (Commission ID): Մեր անունից հարցումը անցկացնում է Lonergan անկախ հետազոտական ընկերությունը:

4) Ոչինչ չանել և որոշել, որ տվյալ դեպքում չեք ցանկանում կարծիք տրամադրել ձեզ մատուցվող խնամքի վերաբերյալ: (Խնդրում ենք ցանկության դեպքում ազատ զգացեք ընտրելու այս տարբերակը):

Եթե որոշեք տրամադրել ձեր կարծիքը, Commission-ը կհարգի տեղեկությունների գաղտնիության ձեր իրավունքը և մանրամասներ չի կիսի տարեցների խնամքի ձեր մատակարարի հետ, եթե միայն դուք անձամբ չտաք դրա համաձայնությունը, կամ էլ եթե մեզ չափազանց չմտահոգի ձեր ապահովությունը, առողջությունը կամ լավ ինքնազգացողությունը:

Commission-ի գաղտնիության քաղաքականության և գործելակերպի մասին տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Commission-ի կայքը՝ agedcarequality.gov.au հասցեով կամ կապվել Commission-ի հետ հերախոսով՝ զանագահրելով 1800 951 822 և սեղմելով 2:

Եթե թարգմանչի կարիք ունեք, խնդրում ենք զանգահարել Գրավոր և բանավոր թարգմանչական ծառայություն (Translating and Interpreting Service, TIS) 131 450 հեռախոսահամարով և խնդրելով, որ ձեզ կապեն Aged Care Quality and Safety Commission-ի հետ:

Հարգանքներով՝

Aged Care Quality and Safety Commission